

Ոչ-Որոգիեան հետքեր «Գիրք Ծննդոց»ի Գրաբար բնագրում

Աստուածաշնչի գրաբար եւ յունարէն Որոգիեան բնագրերի աղերսակցութիւնը յաճախ է քննութեան նիւթ դարձել տարբեր խորութիւններով նկատի ունենալով բացայայտուած բազմաթիւ փաստերը Աստուածաշնչի միասնաբար առած բոլոր գրքերի մէջ: Նոյնը չի կարելի ասել առանձին գրքերի վերոյիշեալ աղերսակցութեան քննութեան մասին, թէեւ Զ. Ուիլլըրզի, Պ. Քաուլի, Մ. Սթոունի, Կ. Կոքսի բնագրային ու բնագրագիտական աշխատանքները մասամբ լրացնում են գոյութիւն ունեցող բացը: Աւելի կարեւորելով գրաբար-որոգիեան խմբագրութեան բնագրերի աղերսակցութեան հարցը. ակամայ անտեսուել են գրաբար բնագրի մէջ Որոգիեան խմբագրութեանը չպատկանող թարգմանական շերտերը կամ տարբերը, առանց որոնց գրաբար եւ Որոգիեան խմբագրութեան բնագրերի համեմատական քննութիւնը ամբողջական եւ լիակատար լինել չի կարող: Առաջադրելով այս հարցը, նպատակ չունենք Հին եւ Նոր կտակարանների բոլոր գրքերի մասին խօսել, այլ ուզում ենք մեր խօսքը մասնաւորեցնել «Գիրք Ծննդոց»ին, ուր առկայ փաստերը վկայում են, թէ «Գիրք Ծննդոց»ի գրաբար բնագիրը ամբողջութեամբ եւ միայն Որոգիեան խմբագրութեանն յար եւ նման տարբերակը չէ, այլ ունի բառիմաստի, քերականական ձեւերի (հոլով, խոնարհում), շարադասութեան օրինակներ՝ Որոգիեան խմբագրութեանը չհամապատասխանող, հետեւաբար ձեռագրական մէկ այլ խմբին պատկանող:

Նախ եւ առաջ խոստովանենք, որ նման մի գործ ձեռնարկել անհնարին կը լինէր առանց Զ. Ուիլլըրզի բնագրային կոթողական աշխատութեան, ուստի երախտագիտութեան առաջին խօսքն ուղղում ենք նրան:

«Գիրք Ծննդոց»ի գրաբար բնագրի մէջ Որոգինեան խմբագրութեանը չպատկանող ընդհանրութիւնների մեր բացայայտած փաստերը ուզում ենք դասդասել հետեւեալ կարգով.

Ա. Յաւելեալ քառեր. *Խէ 5 տունը յունարէն քննական բնագրում ունի հետեւեալ տեսքը. Εἰπεν δὲ Φαραῶν τῷ Ἰωσέφ եւ ասէ փարաւոն ցօովսէփ: Յունարէնն ունի այլ կառուցուածք. Εἰπεν δὲ Φαραῶν τῷ Ἰωσέφ λεγὼν: Մեր համեմատած հայերէն բոլոր ձեռագրերը, աւելի քան 40 միաւոր, ճշտօրէն վերարտադրում են վերջին տարբերակը՝ հետեւեալ փոփոխութիւններով.*

ա) Εἰπεν-ին ասէ-ի փոխարէն տրուած է նրա խօսեցաւ հոմանիշը, որպէսզի ասէ-ն վերապահուի λεγὼν-ի համար. բ) հայերէնն ունի ընդ նախդիրը, որ աւելացուել է խաւանցաւ բայի խնդրառական պահանջի համաձայն: Իբրեւ արդիւնք, գրաբար բնագրում ունենում ենք: Եւ խաւանցաւ փարաւոն ընդ Յովսեփայ եւ ասէ՝ յար եւ նման Որոգինեան խմբագրութեանը չպատկանող վերոյիշեալ ձեռագրերին: Այնուամենայնիւ ունենք հայերէն մէկ ձեռագիր, որ Որոգինեան տարբերակն է վերարտադրում. Դա A₈ ձեռագիրն է. Եւ ասէ փարաւոն ցօովսէփ:

Բ. Բացակայ քառեր. Որոգինեան եւ ոչ-որոգինեան խմբագրութիւններին պատկանող ձեռագրերի համեմատութիւնը ցոյց է տալիս, որ ոչ-որոգինեան խմբագրութեանը պատկանող ձեռագրերի մէջ երբեմն բացակայում են բառեր, երբեմն նոյնիսկ բառակապակցութիւններ ու նախադասութիւններ, իսկ հայերէն ձեռագրերն էլ վերաբնագրում են ոչ-որոգինեան տարբերակները: Լաւագոյն օրինակը արտադրում են ոչ-որոգինեան տարբերակները: Յունարէն քննական բնագրի մեզ տալիս է թերեւս ԽԱ 21 տունը: Յունարէն քննական բնագրի մէջ այն ունի հետեւեալ տեսքը. Եւ մտանէին յորովայնս նոցա եւ ոչ երեւէին, եթէ մտեալ են յորովայնս նոցա: Այս ὅτι εἰσῆλθον εἰς κοιλίας αὐτῶν-ը (Եթէ մտեալ են յորովայնս նոցա) առկայ է Զ. Ուիլֆլուրդի համեմատած յունարէն ձեռագրերի մէջ՝ բացառութեամբ եթէ պայմանանիւն ունեցող ձեռագրի: Եւ ահա ճիշտ այդ 125 ձեռագրի պէս հայերէն ձեռագրերն էլ չունեն եթէ մտեալ եմ յորովայնս նոցա: Ասել, թէ եթէ մտեալ եմ յորովայնս նոցա-ն նախորդ նախադասութեան իմաստը նկատի ունենալով աւելորդ է նկատուած եւ ընդօրինակուած չէ յունարէն 125 եւ հայերէն բոլոր ձեռագրերում, սոսկ ենթագրութիւն կը լինի:

Նոյն ենթագրութեամբ կարելի՞ է կարծել, թէ աւելորդ μοι -ինձ բառը ἐπὶ κλινόν μοι - խոնարհեցո ինձ բառակապակցութեան մէջ

(ԻԴ 14): Փաստերը, սակայն, այլ բան են ասում: Որոգինեան խմբագրութեանը պատկանող ձեռագրերի $\epsilon\pi\acute{\iota}\kappa\lambda\iota\nu\omicron\nu\ \mu\omicron\iota$ (խոնարհեցո ինձ) տարբերակի փոխարէն ոչ-որոգինեան խմբագրութեանը պատկանող 55 59 316 630 (ու նաեւ 426, որ Որոգինեան է) չունեն $\mu\omicron\iota$, հայերէն բոլոր ձեռագրերը: Ինձ-ի բացակայութիւնը կարելի է բացատրել երկու իրար հաւասարազօր հանգամանքներով, եթէ նոյնիսկ անտեսենք Որոգինեան խմբագրութեանը չպատկանող ձեռագրերի ընձեռած տարբերակը: Որո՞նք են դրանք. ա) Գոնէ գրաբար բնագրերում ինձ բառը աւելորդ է հնչում: Ի՞նչ է նշանակում խոնարհեցո ինձ զսփորդ քո: Ինձ-ի առկայութիւնը կարելի է բացատրել իմաստային տեսակէտով, բայց ոչ քերականօրէն: Բ) Ըստ Զ. Ուիլլըզի, $\mu\omicron\iota$ չունի Որոգինեան խմբագրութեան պատկանող նաեւ 426 ձեռագիրը:

Յակոբը վրդովուած է Ղաբանի հետապնդումների պատճառով. եւ բնական է իր զայրոյթն արտայայտող հարցական բառերին տարափը. Զի՞նչ վնաս է իմ, զի՞նչ յանցանք են իմ, զի՞ պնդեցար զհետ իմ, զի՞ յուզեցեր զամենայն զինչս իմ, զի՞նչ գտեր յամենայն ընչից քոց (ԼԱ 36-37): Սա յունարէն քննական բնագրի գրաբար թարգմանութիւնն է, ուր հինգ համադաս նախադասութիւններից իւրաքանչիւրն ունի իր հարցական բառը՝ զի՞նչ, զի՞նչ, զի՞, զի՞նչ: Չորրորդ հարցականը (ՕՏԻ) բացակայում է Որոգինեան խմբագրութեանը չպատկանող 14-16-77-131-500-735-125-458-509 ձեռագրերի մէջ, ինչպէս եւ համեմատուած հայերէն բոլոր ձեռագրերում:

Բացակայող ՕՏԻ -զի՞նչ-ի փոխարէն հայերէն ձեռագրերն ունեն եւ, որպէսզի կապ ստեղծուի զի՞ պնդեցիր զհետ իմ եւ յուզեցեր զամենայն զինչս իմ նախադասութիւնների միջեւ: Տարբերութիւնն այնուամենայնիւ այսքանով չի աւարտուում, այլ երկրորդ զի՞նչ-ից առաջ հայերէն ձեռագրերն ունեն կամ իբրեւ շողկապող բառ. զի՞նչ վնաս է իմ, կամ զի՞նչ յանցանք են իմ: Կամ եւ եւ շողկապների առկայութիւնը մեզ նաեւ հետեւցնել է տալիս, որ հայ թարգմանիչները թէեւ հարազատ են մնացել յունարէն բնագրին, բայց եւ անտես չեն արել նախադասութիւնների միջեւ տրամաբանական կապ ստեղծելու անհրաժեշտութիւնը՝ հիմնուած հայերէնի քերականական առանձնատկութիւնների վրայ:

Յունարէն քննական բնագրի մէջ $\epsilon\pi\iota\delta\epsilon\upsilon\tau\epsilon\varsigma$ բայն ունի ուղիղ խնդիր՝ $\tau\omicron\nu\ \omicron\iota\tau\omicron\nu$ (ԽԲ 26: Թարգմանաբար՝ բարձեալ զցորեան): Որոգինեան խմբագրութեան պատկանող ձեռագրերի մեծ մասը՝ 0-58 յաւելեալ ունի նաեւ $\alpha\upsilon\tau\omega\nu$ (բարձեալ զցորեան իւրեանց): Հայերէն

ձեռագրերը չունեն *ոչ զցորեան, ոչ իւրեանց, այսինքն բառեր, որոնց բացակայութիւնը կարելի չէ բացատրել պատահական վրիպանքով, այլ միայն Որոգինեան խմբագրութիւնից դուրս գտնուող մի աղբիւրով, մանաւանդ որ Յովհան Ոսկեբերանի երկի մէջ (Chr VIII 551) նոյնպէս չկան զցորեան եւ իւրեանց բառերը, ինչպէս ցոյց է տրուած յունարէն քննական բնագրում:*

Վերջին մէկ օրինակ եւս. Յունարէն քննական բնագրում *καὶ ηὐξήθη*-ին յաջորդում է բնագրային եւ իմաստային կարեւոր նշանակութիւն ունեցող *մի հատուած՝ καὶ κτώκησεν εν τῷ ἐρημῷ* (ԻԱ 20 -եւ բնակեցաւ յանապատի), որ բացակայում է Որոգինեան խմբագրութեանը չպատկանող այնպիսի ձեռագրի մէջ, ինչպիսինք են 52(C)-58-79-408-569-615-761 (cI) ու նաեւ ղպտիերէն սահիդեան բնագրում: Հայերէն ձեռագրերը արտացոլում են ոչ թէ յունարէն Որոգինեան խմբի ձեռագրերի, այլ C խմբի տարբերակը՝ վերջինիս նման եւ աճեացից յետոյ չունեն եւ բնակեցաւ յանապատի:

Գ. Այլիմաստութիւն: Ոչ-Որոգինեան եւ զրաբար բնագրերի վերոյիշեալ առընչակցութիւններին աւելանում է այլիմաստութիւնների ընդհանրութիւնը, որ ինքնին հետաքրքիր է:

Բաւարարուենք մի քանի օրինակներով: *πρόσταγμα* (-պատուէր, պատգամ) բառի փոխարէն Bd 75 537—619 ձեռագրերը *ԻԻ 50* տան մէջ ունեն *πράγμα* (գործ, իր) տարընթերցուածը, իսկ ձեռագրերը *թէեւ* ունեն *πρόσταγμα*, բայց լուսանցքում իրեւ սրբագրութիւն գետեղել են *πράγμα*: Հայերէն ոչ մի ձեռագիր չունի պատուէր կամ պատգամ տարընթերցուածը, այլ միայն իր («Ի Տեառն է ել իրդ այդ»): Նոյնը՝ ղպտերէն բոհաիրեան բնագիրը: Այս նշանակում է, թէ գոնէ այս բառը պարունակող հատուածի բնօրինակը պէտք է փնտռել յունարէն վերոյիշեալ ձեռագրերի նախագաղափար օրինակներում:

Յունարէն ձեռագրերում *λῶτ* եւ *αὐτοῦ* բառերի տարբերակների գոյութիւնը կարելի է բացատրել երկու հիմնաւոր պատճառներով: ա) *αὐτοῦ*-ն նոյն ինքն Ղովտ-ն է իմաստային առումով, հետեւաբար *αὐτοῦ*-ին փոխարինել է *λῶτ*-ը, աւելի ճիշտ *αὐτοῦ*-ի փոխարէն, գործածուել է որոշակիութիւն մտցնող *λῶτ*-ը: բ) իրար փոխարինող այդ *λῶτ* *αὐτοῦ* բառերը գրչական առումով այնքան մօտիկ են (չասելու համար նման են) իրար որ կարող էին դիւրութեամբ փոխարինել իրար: Մեզ համար կարեւորն այստեղ այն է, սակայն, որ Հայերէն բոլոր ձեռագրերն անխտիր որդեգրել են Որո-

գինեան խմբագրութեանը չպատկանող չորս ձեռագրերի (381 500 53-664) տարբերակը, այսինքն ունեն Ղովտ. Եւ դարձաւ կինն յետս եւ եղեւ արձան աղի: Եւս յատկանշական մէկ պարագայ. եթովպերէն, ղպտերէն բոհարեան եւ պաղեստինեան արամերէն բնագրերը նոյնպէս ունեն Ղովտայ:

Յունարէն միայն մէկ ձեռագիր (458) ԺԹ 13 տան մէջ ունի տῆν πόλιν ταυτήν (=գըաղաքս զայս). իսկ մնացածներն ունեն τὸν τόπον ταῦτον (=գտեղիս զայս): Հայերէն բոլոր ձեռագրերը տալիս են գըաղաքս զայս, առանց տարրնթերցուածների, որով հայերէն ձեռագրերը արտացոլած են լինում Որոգինեան խմբագրութեանը չպատկանող այս 458 ձեռագրի տարբերակը: Որ միայն 458 ձեռագիրն է ընտրել միակ ճիշտ տարբերակը (πόλιν), ցոյց է տալիս ἐκρίψαι αὐτῇν ընթերցումը: Աստից իգական սեռն ստիպում է ընտրել իգական սեռին համապատասխանող ἡ πόλις: Աստեղից էլ 246 ձեռագրի տարբերակը, ուր αὐτῇν -ի փոխարէն ունենք ἣν πόλιν:

ԽԲ 28 ἐξέσθη ἡ καρδία αὐτῶν արտայայտութեան մէջ ἡ καρδία (=հայերէն բնագրի մէջ միտք է թարգմանուած ոչ միայն այն պատճառով, որ հայ մատենագրութեան մէջ զարմանալու յատկութիւնը մտքին է վերագրուած (յիշենք Եղիշէն՝ զարմացաւ մեծ հայրապետն ընդ միտս իւր, էջ 135: Ղազար Փարպեցին՝ Զարմանայր ի միտս իւր, էջ 177) այլ նաեւ, որովհետեւ-ի փոխարէն ἡ διάνοια միտս ունեն Որոգինեան խմբագրութեանը չպատկանող C¹⁵⁻¹² 730 ձեռագրերը:

Դ. Քերականական: Յունարէն քննական բնագրի մէջ ԼԸ 20 տունն ունի τὸν ἔριφον ἐξ αἰγῶν (=ուլ յայծեաց), որին հակադրում է d 128 75 t 318-527 630 ձեռագրերի τὸν ἔριφον αἰγῶν: Այսինքն բնագրի մասնական բացառականի փոխարէն յիշեալ ձեռագրերն ունեն յատկացուցիչ-յատկացեալ. մէկը՝ ուլ յայծեաց, միւսը՝ ուլ յայծեաց յարաբերութիւնը: Եթէ հայերէն ձեռագրերի գրիչները կարող էին չնկատել յայծեացի-յ-ն եւ բացառականը վրիպանքով վերածել սեռականի, ապա նոյնը չի կարելի ասել յունարէն ձեռագրերի գրիչներին մեզ եւ ձեզ հասկանալի պատճառներով: Յամենայն դէպս հայերէն միայն երկու ձեռագրեր հարազատ են մնացել յունարէն Որոգինեան խմբագրութեան ձեռագրերին՝ ունեն ուլ յայծեաց: Դրանք են J₆ եւ K₂ ձեռագրերը:

Ե. Շրջում շարադասութիւն. Յունարէն բնագրի ԻԴ 36 տան մէջ ունենք ἔδωκεν αὐτῷ ὅσα ἦν αὐτῷ (-ետ. նմա, ինչ էր նորա): Այս

չարադասութեան փոխարէն դրան գումարած եւ $\pi\alpha\nu\tau\alpha$ -ի (=զամենայն) յաւելումը տեսնում ենք D MS^c 940 426 346-392-527 120-407 55 59 3196 730 ձեռագրերում: Շրջուն չարադասութեան ոչ-Որոգի-նեան տարբերակ ենք տեսնում Դ 1 տան մէջ: Սրա առաջին հատուածը եւ նախադասութեան իմաստն արտայայտելու եղանակով, եւ նախադասութեան անդամների չարադասութեամբ այլ է յունարէն եւ հայերէն բնագրերում: Յունարէնն ունի 'Αδᾱμ δὲ ἐγὼ Εὐᾱν (-եւ գիտաց զԵւա), որի դիմաց հայերէնն ունի Եմուտ Ադամ առ Եւա: Եթէ անգամ մի կողմ թողնենք արտայայտչաձեւերի տարբերութիւնը, ապա այստեղ կարեւորում է այն հանգամանքը, որ հայերէնի այսօրինակ չարադասութիւնն ունի իր նախօրինակը յունարէն 346 319 ձեռագրերում, որոնք չեն պատկանում Որոգիներան խմբագրութեանը: "Εγὼ δὲ Ἀδᾱμ (=Եւ գիտաց/եմուտ Ադամ), այսինքն յար եւ նման հայերէնի չարադասութեանը: Ի դէպ, յունարէն նոյն նախադասութիւնը նոյն չարադասութեամբ հանդէս է գալիս Դ 25ում, իսկ հայերէնը, նոյն հետեւողականութեամբ, կրկնում է ԻՐ չարադասութիւնը, բայց 346 319 ձեռագրերն այստեղ այլեւս չունեն իրենց տարւնթերցուածները:

Եթէ յունարէն ձեռագրերի ընձեռած տարբերակներից առանձնացնենք καὶ τοῦτον λάβετε (ԽԴ 29), ապա կը ստացուի, որ հայերէն բնագրային զսա եւս առնուցուք չարադասութիւնը նոյնական է յունարէն π 30-127-730 ձեռագրերի չարադասութեան հետ, ձեռագրեր, որոնք ոչ միայն Որոգիներան խմբագրութեանն չեն պատկանում, այլեւ հայերէն բնագրերի հետ առնչակցութեան քիչ փաստեր ունեն:

Ձ. Այլ քննարկի ընդհանրութիւններ

Յունարէն քննական բնագրում Դ 5 տան նախադասութիւնը արտայայտուել է կրաւորաձեւ նախադասութեամբ. Եւ տրտմեցաւ Կայիմ յոյժ: Յունարէն ձեռագրերից միայն 129 ունի ἐλυπηθη (=տրտմեցաւ): Ի դէպ տրտմեցաւ ունեն նաեւ Կղեմէս Հռոմայեցու երկը (Clem R₄) եւ ղպտերէն բռհաիրեան բնագիրը:

Ա 14 տան մէջ յունարէն բնագիրն ունի τοῦ δααχαρίζειν (=ի մեկնել), իսկ գրաբար բնագիրը՝ միայն մեկնել (եւ բնագրում) եււը աւելորդ է, հետեւաբար եւ սխալ, ցոյց են տալիս ոչ միայն նախադասութեան իմաստն ու քերականութիւնը, (ըստ օրինի պէտք է լիւնէր եղիցիմ, զի մեկնիցեմ, եղիցիմ ի մեկնել կամ եղիցիմ մեկնել (ինչպէս եւ դրուած է քննական բնագրում), այլ յունարէն ձեռա-

գրերը, որոնք ունեն կամ δεαχαρίξειν (=ի մեկնել կամ պարզապես մեկնել), կամ ὡστε δεαχαρίξειν (-զի մեկնեսցեն): Հայերէն ձեռագրերում այդ եւ-ը գալիս է Որոգինեան խմբագրութեանը չպատկանող ձեռագրերից, ինչպիսիք են AM C-16-76 129 75 46 y-121 527 31 55 508 509 730: Ի դէպ եւ ունեն նաեւ լատիներէն, եթովպերէն, ղպտերէն բոհաիրեան, պաղեստինեան արամերէն թարգմանութիւնները եւս:

Յունարէն բնագրի Զ 17 տան-ը καταχλισμος՝ դրոււմ է որոշեալ յօդով τὸν καταχλισμος՝ (=զջրհեղել), երը հայերէնում զանց է առնուած. ես ածից ջրհեղել ջրոյ: Τὸν -ը զեղչուած է նաեւ յունարէն մի քանի ձեռագրերում, որոնցից ոչ մէկը Որոգինեան խմբագրութեան չի պատկանում: 52-79-569-615-761 527: Κατα τὴν ἐπερώτησιν (=ըստ Հարցանելոյ)-ի լրացումը յունարէն բնագրում ուղիղ խնդիր է՝ ταύτην (=զդա): A 14-16-18-77-131-500-739 ձեռագրերը ταύτην: Ուղիղ խնդրի փոխարէն ունեն սեռականով դրուած եւ ենթակայի իմաստ արտայայտող αὐτοῦ: Եւ ճիշտ այս տարբերակն էլ որդեգրել է հայերէն բնագրում՝ ըստ Հարցանելոյն նորա (ԽԳ 7): Որոգինեան խմբագրութեան մաս չկազմող նոյնիսկ մէկ ձեռագրի տարբերակն էլ երբեմն անցել է հայերէն բնագրին: Այսպէս. ԻԶ 22 տան κύριος ἡμῶν (=տէր մեզ) կապակցութիւնը միայն 527 ձեռագրում է չրջադասուած, եւ չրջադասուած այդ ձեւն էլ որդեգրել է հայերէն, եթովպերէն եւ Վուլգատա բնագրերում:

Πεπορωαν (=գնաս). ԼԱ 30) բայի փոխարէն πορεοδει πορευοῦντι ունի միայն F8 ձեռագիրը, եւ հայերէն բոլոր ձեռագրերն անխտիր արձագանքում են այդ ձեռագրին, որովհետեւ բոլորն էլ ունեն գնացեալ երթաւ (նոյնը մասորական եւ արաբերէն բնագրերում): Յունարէն միայն 125 ձեռագիրն է, որ բնագրային καὶ μετ'αὐτοῦ (=եւ յետ այդու. ԽԵ 15)-ի փոխարէն ունի εἶτι (յետոյ), եւ հայերէն բոլոր ձեռագրերը համապատասխանում են յունարէն այդ ձեռագրի տարբերակին. Յետոյ մատեաւ Յովսէփ: Ἡοδονία (=լիութիւն. ԽԱ 31) բառից յետոյ յունարէն բնագրում կայ ἐπὶ τῆς γῆς (=ի վերայ երկրի): Այս բառակապակցութիւնը բացակայում է յունարէն միայն 121 պայմանանիշն ունեցող ձեռագրում եւ, դրան համապատասխան, հայերէն բոլոր ձեռագրերում:

Բերուած օրինակները եւ դրանց իմաստային, քերականական կամ բնագրային վերլուծութիւնները մեզ բերում են այն համոզման, որ

1. Ոչ-որոգինեան խմբագրութեան եւ հայերէն բնագրի ընդհանրութիւնները տարաբնոյթ են. բառի կամ բառերի յաւելում, բառի կամ բառերի բացակայութիւն, այլիմաստ թարգմանութիւն, շարադասութիւն.

2. Ընդունելով հանդերձ յունարէն Որոգինեան խմբագրութեան բնագիրը պարունակող ձեռագրերի խիստ ազդու կնիքը հայերէն բնագրի ու ձեռագրերի վրայ, պիտի չԺխտենք նաեւ այլ խմբագրութիւնների եւ դրանց առանձին միաւոր-ձեռագրերի բնագրային հետքերը հայերէն բնագրում կամ առանձին ձեռագրերում.

3. Այդ հետքերը ի յայտ են գալիս հայերէն ձեռագրերի մերթ մեծամասնութեան մէջ, մերթ առանձին ձեռագրի, միշտ այնպէս, ինչպէս

4. Ոչ-որոգինեան խմբագրութեան եւ հայերէն բնագրի ընդհանրութեան աղբիւրը կարելի է գտնել ոչ-որոգինեան խմբագրութեան պատկանող մերթ բազմաթիւ ձեռագրերում, մերթ առանձին ձեռագրում.

5. Ոչ-որոգինեան խմբագրութիւնների մէջ յատկապէս C խմբագրութեան ձեռագրերի բնագրային հետքերն են նկատելի հայերէն ձեռագրերում:

ԱՆԴՐԱՆԻԿ ԶԵՅԹՈՒՆԵԱՆ

Non-Origenic Traces in the Ancient Armenian Text of "The Book of Genesis"

(summary)

Antranik Zeytounian

A comparative examination of the Greek and Ancient Armenian texts of "The Book of Genesis" show that undeniable traces, of both the Origenic Edition Greek text and, although to a lesser degree, of manuscripts not belonging to the Origenic Edition, are present in Armenian manuscripts containing the Bible.

On the basis of the comparative examination between the Greek (Septuaginta, Vol. I, ed. J. William Wevers, Gottingen, 1974) and Ancient Armenian (Yerevan, 1985) texts shows that there are numerous correlations of various nature - textual, grammatical, related to style and so on. The proposed report shows and analyzes the traces of those correlations, giving examples.